# DIGNITY HEALTH-ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

**ՈՒՄ ԿՈՂՄԻՑ՝** Dignity Health-ի Տնօրենների խորհուրդ

**ԹԵՄԱ՝** Հիվանդի հաշվառման և հավաքագրման քաղաքականություն

**ՈՒԺԻ ՄԵՋ Է՝** 2017թ. հունվարի 1-ից

**ՎԵՐԱՆԱՅՎԵԼ Է՝** (60.4.006) 2012թ. հունվարի 17-ին; 2011թ. ապրիլի 25-ին; 2007թ. հոկտեմբերի 20-ին; 2007թ. դեկտեմբերի 19-ին; 2007թ. մայիսի 7-ին

**ՍԿԶԲՆԱՊԵՍ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝** (60.4.006) 2007թ. մայիսի 7

**ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝** (60.4.006) Սեփական միջոցներով հիվանդի վճարման հաշիվների հաշվառման և հավաքագրման ուղեցույցների քաղաքականություն: 2012թ. հունվարի 17, 2015թ. ապրիլի 25; 2010թ. հոկտեմբեր 20

(60.4.006) Ապահովագրված հիվանդի վճարման հաշիվների հաշվառման և

## I. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝

Dignity Health-ի ռեսուրսների պարտականությունները կառավարելու և նրան թույլ տալու, որպեսզի կարիքավորներին օգնություն տրամադրվի, Dignity Health-ը սահմանում է այս քաղաքականությունը՝ հիվանդներին մատուցվող ծառայությունների հաշվառման և հիվանդների չվճարված հաշիվների հավաքագրման վերաբերյալ: Dignity Health-ի կողմից կիրառվող գործընթացը հիվանդների հաշվառման և չվճարված պարտքերի հավաքագրման վերաբերյալ պետք է արտացոլի Dignity Health-ի մարդկային արժանապատվության և ռազմավարական կառավարման արժեքները, ինչպես նաև հիվանդների անձնական պատասխանատվությունը՝ նպաստելու բժշկական ծառայությունների արժեքը, որը նրանք ստանում են Dignity Health-ի կողմից:

## II. ՆՊԱՏԱԿ՝


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

Այս քաղաքականության նպատակն է Dignity Health ուղեցույցներ սահմանելը՝ հաշվառման և հավաքագրման վերաբերյալ այն հիվանդներից, որոնք ստանում են ծառայություններ Dignity Health-ի կողմից, այդ թվում՝ հաշվառման և հավաքագրման պրակտիկան, որն իրականացվում է ներկայացուցիչների կողմից Dignity Health-ի ծառայությունների համար:

## III. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ՝

Դիմումի ժամանակահատվածը

Ավելի ուշ (i) հիվանդի հիվանդանոցից դուրս գրվելուց, կամ հիվանդի կողմից ծառայությունից օգտվելու իրավասության ժամկետից 360 օր հետո, կամ (ii) իրավասու-ծառայությունից օգտվելու համար հետ-դուրսգրման նախնական վճարման հաշվի ամսաթվից 240 օր հետո:

Լիազորված ներկայացուցիչ

Լիազորված ներկայացուցիչը՝ դա երրորդ կողմի ներկայացուցիչ է, որը լիազորված է Dignity Health-ի կողմից՝ Dignity Health-ի տարբեր գործառույթներ իրականացնելու համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով, հիվանդների հաշիվների դուրսգրմամբ և հիվանդների չվճարված հաշիվների հավաքագրմամբ:

Բարեգործական խնամք

Բարեգործական խնամքը՝ դա ամբողջական ֆինանսական օգնություն է որակավորված հիվանդների համար, որը ազատում է հիվանդին և նրա երաշխավորին համապատասխան ծառայությունների վճարման բոլոր ֆինանսական պարտավորություններից: Բարեգործական խնամքը չի նվազեցնում այն գումարը, եթե այդպիսին կա, որը երրորդ կողմը հնարավոր է պարտավորվի վճարել հիվանդին մատուցվող համապատասխան ծառայությունների համար:

Զեղչված խնամք

Զեղչված խնամքը՝ դա մասնակի ֆինանսական օգնություն է որակավորված հիվանդների համար՝ հիվանդին և նրա երաշխավորին համապատասխան ծառայությունների վճարման մասնակի ֆինանսական պարտավորությունից ազատելու (ինչպես սահմանված է ստորև): Զեղչված խնամքը չի նվազեցնում այն գումարը, եթե այդպիսին կա, որը երրորդ կողմը հնարավոր է պարտավորվի վճարել հիվանդին մատուցվող


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

համապատասխան ծառայությունների համար:

<u>Հավաքագրման գործակալություն</u>

Լիազորված ներկայացուցիչը զբաղվում է հավաքագրման գործունեությամբ այն բանից հետո, երբ հիվանդը չի վճարում դուրս գրված հաշիվը՝ որպես հիվանդանոցի նորմալ վճարային ցիկլի մի մաս, կամ չի համաձայնեցնում Dignity Health-ի համար վճարման ընդունելի պայմաններ: Հավաքագրման գործակալություն տերմինը չի ներառում լիազորված ներկայացուցիչ հաստատությունը, որը իրականացնում է Dignity Health-ի նորմալ վճարման գործառույթները:

<u>Համապատասխան ծառայություններ</u>

Համապատասխան ծառայությունները ներառում են բոլոր տեսակի շտապ և ոչ շտապ բժշկական օգնությունը, անհրաժեշտ բուժօգնությունը, որը տրամադրվում է Dignity Health-ի կողմից՝ Dignity Health-ի հիվանդանոցային հիմնարկներում, այդ թվում՝ բոլոր ծախսերում, որոնք թվարկված են յուրաքանչյուր հիվանդանոցի լիցենզայի մեջ: Համապատասխան ծառայությունները չեն ներառում բժշկի ծառայությունները, բուժումները կամ ընթացակարգերը, քանի դեռ Ֆինանսական օգնության քաղաքականության մատակարարի ցանկը չի ներառում համապատասխան բժշկի կամ բժիշկների խմբի ծառայությունները, և եթե կիրառելի է, ծառայությունների, բուժման կամ ընթացակարգերի տեսակների նկարագրությունը, որը տրամադրվում է նման բժշկի կամ բժիշկների խմբի կողմից և հատուկ փախհատուցվում է այս քաղաքականության շրջանակներում:

<u>Շտապ բժշկական օգնություն</u>

Շտապ օգնությունը՝ այն օգնությունն է, որը տրամադրվում է ստացիոնար պայմաններում հետևյալ դեպքերում՝

(a) Բժշկական պայման, որն արտահայտվում է բավարար սուր ախտանիշներով (ներառյալ՝ սուր ցավ) և, որը անհապաղ բժշկական օգնության բացակայության դեպքում կարող է առաջացնել հետևյալ արդյունքը՝

   (i) Անհատի առողջությանը (կամ, հղի կնոջ դեպքում՝ նրա և իր ապագա երեխայի առողջությանը) լուրջ վտանգ է սպառնում:

   (ii) Մարմնի լուրջ վնասի, կամ


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

(iii) Մարմնի որևէ օրգանի կամ մասի լուրջ դիսֆունկցիայի

կամ

(b) Հղի կինը, որի մոտ սկսվել են երկունքի ցավեր, և

(i) Մինչև ծննդաբերելը կա բավարար ժամանակ՝ հիվանդանոց անվտանգ տեղափոխելու համար, կամ

(ii) Տվյալ փոխադրումը կարող է վտանգել կնոջ կամ չծնված երեխայի առողջությունը կամ անվտանգությունը:

Կեցության համար անհրաժեշտ ծախսեր

Կեցության համար անհրաժեշտ ծախսերը ներառում են հետևյալ կետերից ցանկացածը՝ վարձակալություն կամ տան վճար և սպասարկում, սնունդի և կենցաղային ապրանքների, կոմունալ ծառայությունների և հեռախոսի, հագուստի համար վճարներ, բժշկական և ստոմատոլոգիական ապահովագրության վճարներ, դպրոցի կամ մանկապարտեզի վճար, երեխայի վճար կամ ալիմենտ, փոխադրման և ավտոմեքենայի ծախսերի, ներառյալ ապահովագրության, գազի և վերանորոգման, ապառիկ վճարում, լվացքատան և քիմմաքրման, և այլ ոչ ստանդարտ ծախսերի վճարներ:

Արտահերթ հավաքագրման գործունեություններ (Extraordinary Collection Actions, ECA)

Արտահերթ հավաքագրման գործունեությունները ներառում են հետևյալը՝

(a) Վաճառել անհատական պարտքի այլ կողմին, բացառությամբ Դաշնային օրենքով նախատեսված դեպքերի:

(b) Զեկուցել անհատի անբարենպաստ տեղեկատվության մասին սպառողական վարկավորման հաստատություններին:

(c) Հետաձգել կամ մերժել, կամ պահանջել վճարում մինչև անհրաժեշտ բուժօգնություն տրամադրելը՝ անհատին տրամադրված ծառայությունների համար նախկինում չվճարված մեկ կամ ավելի հաշիվների համար, որոնք փոխհատուցվում են ֆինանսական օգնության քաղաքականության ներքո հիվանդանոցում մնալու համար, և

(d) Որոշակի գործողություններ, որոնք պահանջում են իրավական կամ դատական ընթացակարգեր և նախատեսված են դաշնային օրենքով, այդ թվում՝ պարտապանի գույքի վրա կալանք դնելու իրավունք, անշարժ գույքի հետգնում, հավելվածներ/ զրավումներ, քաղաքացիական հայցի գործընթացի նախաձեռնում, որի արդյունքում անհատը դառնում է հանձնարարության հավելվածի սուբյեկտ,


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

ինչպես նաև պահումներ անհատի աշխատավարձից:

Արտահերթ հավաքագրման գործունեությունները (ECA) չեն ներառում որևէ տեսակի կալանք պարտապանի անշարժ գույքի վրա, որն իրավունք կտա հիվանդանոցին նախանգի օրենսդրության համաձայն՝ կարգավորման կամ փոխզիջման վերաբերյալ անհատին (կամ նրա ներկայացուցչին) հասանելիք դատարանի որոշումը հաստատելու, ստացած մարմնական վնասվածքների արդյունքում հիվանդանոցի կողմից ցուցաբերած օգնության համար:

Դաշնային աղքատության սանդղակ

Դաշնային աղքատության սանդղակը որոշվում է աղքատության ուղեցույցներով, որոնք պարբերաբար թարմացվում են Դաշնային ռեգիստրում՝ ԱՄՆ Առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտի կողմից՝ Միացյալ Նահանգների Օրենսգրքի ենթաբաժին (2), Բաժին 9902, օրենքի 42-րդ Վերնագրի հիման վրա: Դաշնային աղքատության սանդղակի ներկայիս ուղեցույցները կարող եք գտնել կայքում՝ http://aspe.hhs.gov/poverty-guidelines:

Ֆինանսական օգնություն վերաբերյալ քաղաքականություն

Ֆինանսական օգնության քաղաքականությունը՝ դա մի քաղաքականություն է, որը հաստատվել է Dignity Health-ի կողմից՝ իրավասու հիվանդներին բարեգործական խնամք և զեղչված խնամք մատուցելու, և որն այստեղ և հետագայում նշվում է որպես «Ֆինանսական օգնություն»:

Եկամուտ

Փոփոխված ճշգրտված համախառն եկամուտ (Modified Adjusted Gross Income, MAGI), ինչպես սահմանված է Հարկային ծառայության (Internal Revenue Services, IRS) կողմից:

Անհրաժեշտ բժշկական օգնություն

Հիվանդանոցային ծառայությունները և պարագաները, և այլ առողջապահական ծառայությունները, որոնք անհրաժեշտ են հիվանդությունը, վնասվածքը, վիճակը կամ ախտանիշները ախտորոշելու կամ բուժելու համար և, որոնք համապատասխանում են ընդունված պրակտիկայի ստանդարտներին: Անհրաժեշտ բուժօգնությունը չի ընդգրկում կոսմետիկ ծառայություններ, որոնք նախատեսված են մարմնի նորմալ գործող մասում միայն գեղագիտական գրավչությունը բարելավելու:


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

<u>Հիվանդի ընտանիքը</u>

Հիվանդի ընտանիքը ներառում է հիվանդին և՝

(a) Համաձայն Ընտանեկան օրենսգրքի 297 Բաժնի՝ 18 տարեկան և բարձր տարիքի անձանց, ամուսնու, զուգընկերոջ և մինչև 21 տարեկան խնամքի տակ գտնվող երեխաների համար, անկախ դրանից, նրանք բնակվում են նույն տանը, թե ոչ:

(b) Մինչև 18 տարեկան անձանց համար՝ ծնողը, խնամակալները և ծնողի կամ խնամակալի մինչև 21 տարեկան այլ երեխաները:

<u>Հիվանդի ընտանեկան եկամուտ</u>

Հիվանդի ընտանեկան տարեկան եկամուտը ստացված 12 ամսվա ընթացքում մինչև Dignity Health-ի կողմից մատուցված ծառայությունը:

<u>Բարձր բժշկական ծախսերով հիվանդ</u>

Հիվանդն, որն ընդգրկված է առողջապահական պլանում, և նաև բավարարում է հետևյալ երկու չափանիշներից մեկին՝

(a) Նախորդ 12 ամսվա ընթացքում հիվանդի տարեկան փաստացի ծախսերը հիվանդանոցում մնալու համար գերազանցում են հիվանդի ընտանեկան եկամտի 10%-ը (սահմանված է վերևում), կամ

(b) Հիվանդի տարեկան փաստացի բժշկական ծախսերը գերազանցում են հիվանդի ընտանիքի եկամտի 10%-ը, եթե հիվանդը ներկայացնում է փաստաթղթեր՝ հիվանդի կամ հիվանդի հարազատների կողմից նախորդ 12 ամիսների ընթացքում ծախսերը վճարելու մասին:

<u>Հաստատագրված վճարներով իրավասության որոշում</u>

Հաստատագրված վճարներով իրավասության որոշումը՝ դա մի գործընթաց է՝ որոշելու հիվանդի իրավասությունը ֆինանսական օգնություն ստանալու, որը հիմնված է հիվանդի կողմից տրամադրված տեղեկության հիման վրա, օրինակ՝ այլ սոցիալական ծրագրերի մասնակցելու որակավորում, անօթևանի կարգավիճակը, կամ հիվանդի նախկին ֆինանսական օգնություն ստանալու իրավասության որոշման հիման վրա: (Նշենք, որ տվյալ Հիվանդի հաշվառման և հավաքագրման քաղաքականության մեջ «Հաստատագրված վճարներով իրավասության» վրա կատարված հղումները նախատեսված են ֆինանսական օգնության Հաստատագրված վճարներով իրավասության համար և չեն տարածվում


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

Medi-Cal-ի հիվանդանոցի Հաստատագրված վճարներով իրավասության վրա, եթե այլ բան վերապահված չէ:) ֆինանսական աջակցության ցանկացած կատեգորիայի առնչվող Բարեգործական խնամք կամ Զեղչված խնամք տրամադրելու նպատակով Dignity Health կորպորացիան կարող է կիրառել Հավանական իրավասության որոշման գործընթաց: Իր հաստատագրված վճարներով իրավունքի որոշման մեջ Dignity Health-ը կարող է ապավինել հրապարակայնորեն մատչելի տվյալների բազաների և երրորդ կողմի մատակարարների կողմից տրամադրված տեղեկության վրա, որոնք օգտագործում են հրապարակայնորեն մատչելի տվյալների բազաները՝ գնահատելու, արդյո՞ք հիվանդը իրավասու է ֆինանսական օգնություն ստանալու:

Բուժզննման գործընթացը նախատեսված է մոդելավորելու Dignity Health կորպորացիայի ֆինանսական աջակցության համար ներկայացվող դիմումը, իսկ բուժզննման միջոցով ստացված տեղեկատվությամբ կազմվում է համարժեք փաստաթղթավորում՝ հիվանդի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության բացակայության դեպքում: Գործընթացը ապահովում է հիվանդի տնային տնտեսության եկամտի և չափի գնահատում և իրականացնում այլ գործոնների վերլուծություն՝ կապված հիվանդի ֆինանսական կարիքների հետ:

<u>Ողջամիտ վճարման պլան</u>

Ողջամիտ վճարումների պլանը՝ դա վճարումների ընդլայնված պլան է, երբ ամսական վճարումը չի գերազանցում հիվանդի ընտանեկան եկամտի 10%-ը՝ կեցության համար անհրաժեշտ ծախսերի հանելուց հետո (վերևում նշված սահմանված կարգով):

<u>Չապահովագրված հիվանդներ</u>

Չապահովագրված հիվանդը՝ այն հիվանդն է, որը չունի բժշկական ապահովագրություն, չի օգտվում բուժօգնության սպասարկման պլանից, պետական ֆինանսավորվող առողջապահական ծրագրից (օրինակ, Medicare կամ Medicaid), և որի վնասվածքը չի համարվում փոխհատուցվող աշխատողների փոխհատուցման տեսանկյունից՝ ապահովագրություն, մեքենայի ապահովագրություն կամ այլ ապահովագրող կամ երրորդ կողմի վճարող, ինչպես որոշված և փաստագրված է հիվանդանոցի կողմից:

## IV. ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՏՈՒԺԱԾ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՆԵՐ


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

Dignity Health-ի բոլոր սուբյեկտները, որոնք տրամադրում են համապատասխան ծառայություններ:

## V. ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

### A. Ծանուցումներ, որոնք պահանջվում են բոլոր վճարման անդորրագրերի վրա

Dignity Health-ը պարտավոր է գործադրել ողջամիտ ջանքեր, որպեսզի բոլոր հիվանդները, որոնք բուժօգնություն է մատուցվել Dignity Health-ի հաստատությունում (անկախ բուժօգնության ստապ, ամբուլատոր կամ ստացիոնար բնույթից) և մատուցված բուժօգնության համար հաշիվ ներկայացվել, յուրաքանչյուր հաշվի համար ստանան գրավոր ծանուցում, որը կներառի հետևյալը.

1. Տեղեկատվություն Dignity Health-ի ֆինանսական օգնության քաղաքականության առկայության և Dignity Health-ի այլ զեղչերի մասին,

2. Տեղեկատվություն Ֆինանսական օգնության և այլ զեղչերի իրավասության մասին,

3. Կոնտակտային տվյալներ (*օրինակ*, հեռախոսի համարը) հիվանդանոցի կամ գրասենյակի աշխատողի, որտեղից մարդիկ կարող են ստանալ լրացուցիչ տեղեկություններ Dignity Health-ի ֆինանսական օգնության քաղաքականության և այլ զեղչերի մասին, և

4. Ուղիղ վեբ կայք, որտեղ հնարավոր է գտնել ֆինանսական օգնության քաղաքականության, ֆինանսական օգնություն դիմումի և հասարակ լեզվով գրված ֆինանսական օգնության քաղաքականության ամփոփագրի պատճենները:

### B. Լրացուցիչ ծանուցում այն հիվանդներին, որոնք բժշկական ապահովագրական ապացույց չեն ներկայացրել

Եթե հիվանդը չի տրամադրել երրորդ կողմի բժշկական ապահովագրության ապացույց բուժօգնություն ստանալու պահին կամ հիվանդանոցից դուրսգրման ժամանակ, Dignity Health-ի հիվանդին ուղղված առաջին հաշիվը կպարունակի հստակ և բացահայտ ծանուցում, ներառյալ հետևյալ


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

տեղեկությունները՝

1. Մատուցված ծառայությունների համար վճարումների մասին հայտարարություն:

2. Հարցում այն մասին, որ հիվանդը տեղեկացրել է հիվանդանոցին ապահովագրություն ունենալու մասին՝ վճարների համար հոգալու՝ բժշկական սպասարկման պլան, պետական ֆինանսավորվող առողջապահական ծրագիր կամ այլ ապահովագրություն:

3. Հայտարարություն այն մասին, որ, եթե հիվանդը չունի բժշկական ապահովագրություն վճարները հոգալու համար, ապա հիվանդը կարող է իրավասու լինել օգտվելու (i) պետական ֆինանսավորվող առողջապահական ծրագրից, օրինակ՝ Medicare, Medicaid կամ CHIP, (ii) Առողջապահության առավելությունների փոխանակման (Health Benefits Exchange) ծրագրի կողմից առաջարկվող ապահովագրական ծածկույթից, ինչպես նաև (iii) պետության կամ վարչական շրջանի կողմից ֆինանսավորվող այլ առողջապահական ծրագրերի միջոցով (օրինակ, Կալիֆորնիայի մանկական ծառայությունների ծրագրի) կամ (iv) Dignity Health-ի ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնության միջոցով:

4. Հայտարարությունը, որտեղ նշվում է, թե ինչպես հիվանդները կարող են ստանալ դիմումները ստորև թվարկված (3) ծրագրերի համար, և ո՛ր հիվանդանոցը կտրամադրի դիմումներ:

5. Ուղղորդում դեպի տեղական սպառողի օգնության կենտրոն, որը գտնվում է իրավաբանական ծառայությունների գրասենյակում:

6. Հետևյալ տեղեկատվությունը Dignity Health-ի ֆինանսական օգնության իրավունքի և Dignity Health-ի Ֆինանսական օգնության հայտադիմումի մասին:

   (a) Հայտարարություն այն մասին, եթե հիվանդը չունի, կամ ունի անբավարար


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

ապահովագրություն և համապատասխանում է Dignity Health-ի որակավորման պահանջներին, այդ թվում՝ ցածր և միջին եկամուտ ունենալու պահանջներին, ապա նա կարող է հավակնել զեղչված խնամք կամ բարեգործական խնամք ստանալու, և

(b) Հիվանդանոցի աշխատակցի կամ գրասենյակի անունը/անվանումը և հեռախոսահամարը, որտեղ հիվանդը կարող է Dignity Health-ի Ֆինանսական օգնության քաղաքականության, ֆինանսական օգնության հայտի մասին տեղեկատվություն ստանալ, և ինչպես կիրառել այդ օգնությունը:

(c) Հայտարարություն այն մասին, որ եթե հիվանդը դիմում է ֆինանսական օգնություն ստանալու համար, կամ միևնույն ժամանակ դիմում է ևս մեկ այլ բժշկական ապահովագրական ծրագրի համար, ապա ոչ մի ծրագիր չի բացառում այլ ծրագրի մասնակցելու իրավունքը:

7. Ծանուցում, որտեղ նկարագրվում է Dignity Health-ի չապահովագրված հիվանդների զեղչը:

**C. Ծախսերի նախահաշիվը և ֆինանսական օգնության դիմումը չապահովագրված հիվանդների պահանջով**

Չապահովագրված հիվանդի պահանջով, Dignity Health-ը կարող է հիվանդին տրամադրել (1) գումարի գրավոր նախահաշիվ, որը անհրաժեշտ կլինի վճարել հիվանդանոցին բժշկական ծառայությունների, ընթացակարգերի և պարագաների համար, որոնք հավանաբար կտրամադրվեն հիվանդին, ելնելով հիվանդանոցում մնալու միջին տևողությունից և ըստ ախտորոշման՝ մատուցվելիք ծառայությունների համար, ինչպես նաև (2) Ֆինանսական օգնության դիմումը: Տվյալ դրույթը չի տարածվում այն հիվանդների վրա, ովքեր ստանում են շտապ բուժօգնություն:

**D. Ծանուցում՝ նախքան արտահերթ հավաքագրման գործունեություններ նախաձեռնելը**

Առնվազն 30 օր առաջ մինչև արտահերթ հավաքագրման գործունեություններ նախաձեռնելը, Dignity Health-ը կամ նրա լիազորված ներկայացուցիչը պետք է անեն ամեն ինչ հետևյալի համար՝


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

1. Հիվանդին տրամադրել գրավոր ծանուցում («Արտահերթ հավաքագրման գործունեության ծանուցում»), ինչը թույլ կտա՝

(a) Ցույց տալ, որ ֆինանսական օգնությունը հասանելի է իրավասու անձանց համար։

(b) Որոշել արտահերթ հավաքագրման գործունեություն(ներ), ըստ որի հիվանդանոցային հաստատությունը կամ լիազորված ներկայացուցիչը մտադիր է նախաձեռնել խնամքի համար վճարում ստանալը։

(c) Սահմանել վերջնաժամկետ, որից հետո նման արտահերթ հավաքագրման գործունեություն(ներ) կարող են սկսվել, սակայն ոչ շուտ, քան գրավոր արտահերթ հավաքագրման գործունեության ծանուցում տրամադրելուց 30 օր հետո։

(d) Ներառում են հետևյալ հայտարարությունը կամ ցանկացած հետագա հայտարարություն, որն անհրաժեշտ կլինի Կալիֆորնիայի Առողջության և անվտանգության օրենսգրքի §127430 դրույթի մեջ փոփոխություն կատարելու համար: «Համաձայն նահանգային և դաշնային օրենքի, պարտքեր հավաքագրողները պետք է վերաբերեն ձեզ արդար և զերծ մնան կեղծ դիմումներից կամ սպառնալիքներից, անպարկեշտ կամ վիրավորական արտահայտություններից և անհարկի հաղորդակցություններից երրորդ կողմի անձանց հետ, այդ թվում ' ձեր գործատուի: Բացի արտասովոր հանգամանքներից, պարտքերի հավաքագրողները չեն կարող կապ հաստատել ձեզ հետ մինչև 8:00-ը կամ 21:00-ից հետո։ Ընդհանուր առմամբ, պարտքերի հավաքագրողը որևէ տեղեկություն ձեր պարտքի մասին այլ անձի չի կարող տրամադրել, բացառությամբ ձեր փաստաբանի կամ կնոջը։ Պարտքերի հավաքագրողը կարող է դիմել մեկ այլ անձի՝ ձեր գտնվելու վայրը հաստատելու կամ դատական որոշումը ի կատար բերելու։ Հավաքագրման գործունեության մասին լրացուցիչ տեղեկություն ստանալու համար, կարող եք կապվել Առևտրի հարցերով զբաղվող դաշնային հանձնաժողովի (Federal Trade Commission) հետ 877-FTC-HELP (382-4357) հեռախոսով կամ առցանց՝ www.ftc.gov է»:


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

(e) Ներառում է հայտարարություն այն մասին, որ ոչ առևտրային վարկային խորհրդատվության ծառայությունները կարող են հասանելի լինել տվյալ տարածաշրջանում:

2. Ապահովել հիվանդին Dignity Health-ի Ֆինանսական օգնության քաղաքականության ամփոփագրով և արտահերթ հավաքագրման գործունեության գրավոր ծանուցմամբ՝ վերև նկարագրված V.D. 1 բաժնում, որոնք գրված են հասկանալի լեզվով:

3. Գործադրել ողջամիտ ջանքեր, որպեսզի հիվանդին բանավոր զգուշացնել Dignity Health-ի ֆինանսական օգնության քաղաքականության մասին, և թե ինչպես հիվանդը կարող է օգնություն ստանալ՝ ներկայացնելով ֆինանսական օգնության դիմումը:

E. **Թարգմանություններ**

Բոլոր ծանուցումները հաշվառման և հավաքագրման մասին, ինչպես նաև իրավաբանորեն անհրաժեշտ հաղորդակցությունները կթարգմանվեն այն հիմնական լեզուներով, որոնցով խոսում է հանրությունը, իսկ թարգմանված տարբերակները հասանելի կլինեն ըստ պահանջի:

F. **Լիազորված ներկայացուցիչներ**

Dignity Health-ը կարող է օգտվել լիազորված ներկայացուցիչների ծառայություններից՝ նամակներ, ծանուցումներ և/կամ հաշիվներ կամ այլ հայտարարություններ հիվանդների համար կազմելու և ուղարկելու՝ կապված հիվանդի պարտքերի հետ, և չվճարված հաշիվների վերաբերյալ հիվանդների հետ կապ հաստատելու համար: Նման հաղորդակցություններում բոլոր լիազորված ներկայացուցիչները պետք է հետևեն այս Հաշվառման և հավաքագրման քաղաքականությանը և Dignity Health-ի ստանդարտ ընթացակարգերին:

G. **Տոկոսագումար**

Dignity Health-ը չվճարված հաշիվների դեպքում կգանձի տոկոսագումար՝ հաշիվները


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

հավաքագրման գործակալությանը փոխանցելուց հետո: Չվճարված հաշվի տոկոսագումարի վճարում չի համարվում արտահերթ հավաքագրման գործունեություն կամ հավաքագրման գործողություն, որը ենթակա է ստորև նկարագրված սահմանափակումների:

## H. Արտահերթ հավաքագրման գործունեություն (Extraordinary Collection Actions, ECA)

Dignity Health կամ նրա լիազորված ներկայացուցիչները կարող են օգտագործել հետևյալ արտահերթ հավաքագրման գործունեությունները, որոնք ենթակա են ստորև նկարագրված սահմանափակումների:

1. Վարկային հաշվետվություն:

Dignity Health-ի Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո Ֆինանսական օգնության իրավունք ունեցող հիվանդների մասին, ո՛չ Dignity Health-ը, ո՛չ էլ նրա լիազորված ներկայացուցիչները չեն կարող փոխանցել չվճարելու մասին որևէ անբարենպաստ տեղեկատվություն վարկային հաշվետու գործակալությանը՝ առաջին հետվճարային հաշվից հետո 150 օրվա ընթացքում:

2. Քաղաքացիական հայցեր (օր.՝ դատական գործընթաց, պարտապանի զննումներ):

(a) Չապահովագրված կամ բարձր բժշկական ծախսերով հիվանդների դեմ (ինչպես սահմանված է Dignity Health-ի Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ), ո՛չ Dignity Health-ը, ո՛չ էլ նրա լիազորված ներկայացուցիչները չեն կարող նախաձեռնել որևէ քաղաքացիական հայց չվճարելու պատճառով՝ առաջին հետվճարային հաշվից հետո 150 օրվա ընթացքում:

(b) Այս սահմանափակումը Dignity Health բժշկական հաստատություններին չի խանգարում հետապնդել երրորդ կողմից կամ այլ իրավաբանորեն պատասխանատու անձանց կողմից:

(c) Ծախսերը, ներառյալ դատական ծախսերը, կապված Dignity Health-ի կամ նրա լիազորված ներկայացուցիչների իրավաբանական բոլոր


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

գործողությունների հետ, նույնպես կարող են լինել հիվանդի պատասխանատվության առարկա:

3. Գործող դատավճիռների վերանայում:

4. Գույքի առգրավում պարտքերի համար:

(a) Dignity Health-ը և լիազորված ներկայացուցիչները, որոնք հանդիսանում են Dignity Health-ի մասնաճյուղեր կամ դուստր ընկերություններ, Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնության իրավունք ունեցող և հիմնական բնակություն ունեցող հիվանդի անշարժ գույքը պարտքերի պատճառով կալանքի չեն ենթարկելու՝ որպես հիվանդանոցի չվճարված հաշիվների գումարների գանձման միջոց:

(b) Լիազորված ներկայացուցիչները, որոնք Dignity Health-ի մասնաճյուղեր կամ դուստր ընկերություններ չեն հանդիսանում, Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնության իրավունք ունեցող և հիմնական բնակություն ունեցող հիվանդի անշարժ գույքը պարտքերի պատճառով չեն հայտարարերու կամ վաճառելու՝ որպես հիվանդանոցի չվճարված հաշիվների գումարների գանձման միջոց:

5. Պահումներ աշխատավարձից:

(a) Dignity Health-ը կամ լիազորված ներկայացուցիչները, որոնք հանդիսանում են Dignity Health-ի մասնաճյուղեր կամ դուստր ընկերություններ, Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնության իրավունք ունեցող հիվանդի անշարժ գույքի վրա պարտքերի պատճառով կալանք դնելու հայց չեն ներկայացնելու՝ որպես հիվանդանոցի չվճարված հաշիվների գումարների գանձման միջոց:

(b) Dignity Health-ի լիազորված ներկայացուցիչները, որոնք Dignity


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

Health-ի մասնաճյուղերը կամ դուստր ձեռնարկությունները չեն, ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնության իրավունք ունեցող հիվանդի դեմ արգելանքի ծանուցագիր չեն ուղարկի, եթե այդպիսի ծանուցագիրը, ըստ կարգի, դատարանի միջնորդությամբ չէ՝ աջակցվող ներկայացված միջնորդության խնդրանքով հիմքը բացահայտելու համար, որով, հավաստվում է, որ հիվանդը հնարավորություն ունի վճարումներ կատարել աշխատավարձի վրա դրված արգելանքով վճռի համաձայն:

(c) Համաձայն նահանգային օրենքների՝ աշխատավարձի վրա կալանքի գումարը չի կարող գերազանցել թույլատրելի սահմանները:

I. **Հաշվառման և հավաքագրման ժամկետները**

1. Dignity Health-ը և նրա լիազորված ներկայացուցիչները յուրաքանչյուր հիվանդի կամ երաշխավորի կուղարկեն հաշիվ՝ հիվանդանոցային չվճարված գումարների վերաբերյալ, վերև նշված հիվանդանոցից դուրսգրման պահանջների համաձայն: Dignity Health-ը կարող է նաև պարբերաբար հետագա հիշեցումներ ուղարկել:

2. Առաջին հետվճարային հաշվից 120 օր հետո (խնամքի վերջին դրվագի համար, բազմաթիվ դրվագների առկայության դեպքում, որոնք փոխհատուցվում են միասնական հաշվով և, որի համար հիվանդը ստանում է միասնական Արտահերթ հավաքագրման գործունեության ծանուցում), հաշիվը կարող է փոխանցվել լիազորված ներկայացուցչին, որը հանդիսանում է հավաքագրման գործակալություն: Նախքան հավաքագրման գործակալության դիմելը՝ Dignity Health-ը և նրա լիազորված ներկայացուցիչները հիվանդին կտրամադրեն արտահերթ հավաքագրման գործունեության ծանուցում, ինչպես նկարագրված է վերև:

3. Հիվանդը կամ հիվանդի երաշխավորը կարող է դիմել ֆինանսական օգնության համար ցանկացած ժամանակ Դիմումների ընդունման ժամկետում: Եթե դիմում հայտը ներկայացվել է:


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

Դիմումների ընդունման ժամկետի ավարտից հետո, ապա Dignity Health-ը կարող է մերժել դիմումը: Սակայն, Dignity Health-ը դիտարկում է պատճառները, որ դիմումը չի ներկայացվել դիմումների ընդունման ժամկետում, և կարող է ընթացք տալ դիմումին, եթե որոշում է կայացվում, որ դիմողը գործել է ողջամիտ՝ չնայած որ դիմումը չի ներկայացվել ժամանակին:

J. **Ժամանակացույցի երկարաձգում և վճարում ըստ պայմանավորվածության**

1. <u>Ֆինանսական օգնություն ստանալու համար արտահերթ հավաքագրման գործունեության թերի լրացված դիմումների կասեցում</u>: Եթե հիվանդը դիմումի գործընթացի ժամանակ անավարտ ֆինանսական օգնության դիմում է ներկայացնում, Dignity Health-ը՝

   (a) Հիվանդին գրավոր ծանուցագիր կտրամադրի՝ բացատրելով, թե ինչ տեղեկատվություն է հարկավոր ֆինանսական օգնության դիմումն ավարտելու համար, ներառյալ՝ Dignity Health-ի գրասենյակի կոնտակտային տվյալները, որպեսզի նրանք կարողանան տեղեկություն տրամադրել ֆինանսական օգնության քաղաքականության և հիվանդանոցային գրասենյակի վերաբերյալ, շահույթ չհետապնդող կազմակերպություններին կամ կառավարության գործակալությանը, որոնք կարող են աջակցել ֆինանսական աջակցության դիմումների հարցում, և

   (b) Դադարեցնել նախաձեռնել ցանկացած արտահերթ հավաքագրման գործունեություն կամ հետագա գործողություններ իրականացնել նախկինում նախաձեռնված որևէ արտահերթ հավաքագրման գործունեության դեմ, քանի դեռ հիվանդը չի արձագանքել լրացուցիչ տեղեկատվության/փաստաթղթերի համար հարցումներին 30 օրվա ընթացքում:

2. <u>Ֆինանսական օգնություն ստանալու համար լրացված հայտի մշակման վերաբերյալ արտահերթ հավաքագրման գործունեությունների կասեցում</u>:


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

(a) Եթե հաշիվները չվճարած հիվանդը լիարժեք ավարտում է ֆինանսական օգնության դիմումը (կամ ի սկզբանե, կամ թերի դիմումում փոփոխություններ է կատարում հատկացված ողջամիտ ժամկետում) և ժամանակին ներկայացնում է բոլոր պահանջվող փաստաթղթերը արտահերթ հավաքագրման գործունեության նախաձեռնությունից հետո, Dignity Health-ը և նրա լիազորված մատակարարները կդադարեն նախաձեռնել որևէ արտահերթ հավաքագրման գործունեություն կամ հետագա գործողություններ իրականացնել նախկինում նախաձեռնած որևէ արտահերթ հավաքագրման գործունեության նկատմամբ, մինչև հիվանդի ֆինանսական օգնության դիմումի վերաբերյալ իրավասության որոշում ընդունելը:

(b) Եթե որոշվում է, որ հիվանդն իրավասու է ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնություն ստանալ, Հարկային տեղեկագրում (Internal Revenue Bulletin) նշված գումարին գերազանցող ցանկացած գումար (այդ գումարը ներկայումս $5 է, բայց ենթակա է փոփոխման), որը նա վճարել է իրավասու ծառայությունների համար, ճշգրտված գերազանցող գումարը կվերադարձվի՝ համաձայն ֆինանսական օգնության քաղաքականության, և Dignity Health-ը կպահանջի բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, բեկանելու ցանկացած իրականացված արտահերթ հավաքագրման գործունեություն:

(c) Եթե Dignity Healt-ը որոշում է կայացնում, որ հիվանդը ֆինանսական օգնության իրավունք ունի, այն նաև հիվանդին կտրամադրի հաշվառման հայտարարություն, որում նշվում է իրավասու հիվանդի ֆինանսական օգնության գումարը, թե ինչպես է այդ գումարը որոշվել, և թե ինչպես կարող է հիվանդը տեղեկատվություն ստանալ ներկայացված հաշիվների վերաբերյալ:

3. Ընդլայնված վճարման պլան


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

(a) Եթե հիվանդը իրավասու է զեղչված խնամք ստանալ, քանի որ հիվանդի ընտանեկան եկամուտները տատանվում են Դաշնային աղքատության սանդղակի 200-350%-ի միջև, ապա դիմումի հիման վրա, Dignity Health-ը կտրամադրի երկարացված վճարման պլան, որը հնարավորություն կտա վճարումը ժամանակի ընթացքում զեղչված գնով կատարել: Dignity Health-ը և հիվանդը պետք է համաձայնեցնեն վճարման պլանի պայմանները, հաշվի առնելով հիվանդի ընտանեկան եկամուտները և կեցության համար անհրաժեշտ ծախսերը: Եթե հիվանդանոցը և հիվանդը չեն կարողանում համաձայնության հասնել վճարման պլանի վերաբերյալ, ապա հիվանդանոցը պետք է կիրառի վճարումների ողջամիտ պլան:

(b) Եթե հիվանդը իրավասու է զեղչված խնամք ստանալ, քանի որ հիվանդի ընտանեկան եկամուտները ըստ Դաշնային աղքատության սանդղակի տատանվում են 350-500%-ի միջև, ապա դիմումի հիման վրա, Dignity Health-ը կտրամադրի ընդլայնված վճարման պլան, որը հնարավորություն կտա զեղչված գնով վճարում կատարել ոչ ավել, քան 30 ամսվա ընթացքում:

(c) Մյուս բոլոր դեպքերում, Dignity Health-ը կամ նրա լիազորած ներկայացուցիչը կձգտեն բանակցել ընդլայնված վճարման պլանի վերաբերյալ, որն ընդունելի կլինի ինչպես Dignity Health-ի, այնպես էլ հիվանդի համար:

(d) Ֆինանսական օգնության իրավունք ունեցող հիվանդներին աջակցելու համար նախատեսված Dignity Health-ի կողմից առաջարկվող ընդլայնված վճարման պլանները կլինեն առանց տոկոսադրույքի:

(e) Dignity Health-ը կամ լիազորված մատակարարը կարող է հայտարարել ընդլայնված վճարումների պլանը հիվանդի՝ բոլոր հաջորդական վճարումները չկատարելուց հետո 90-օրյա ժամկետում: Նախքան ընդլայնված վճարման պլանի որոշումը, այլևս ոչ այդքան օպերատիվ, Dignity Health-ը կամ որևէ լիազորված ներկայացուցիչ պետք է.


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

(i) Հիվանդի հետ հեռախոսով կապվելու հնարավոր փորձ կատարել, և գրավոր ծանուցում տալ, որ ընդլայնված վճարման պլանը կարող է դառնալ չգործող, և բանակցել վճարման պլանի երկարացման հնարավորության վերաբերյալ, և

(ii) Փորձել բանակցել երկարացված վճարման պլանի չկատարած պարտականությունների պայմանների վերաբերյալ, եթե հիվանդը պահանջի:

(f) Dignity Health-ը կամ որևէ լիազորված մատակարար, այդ թվում հավաքագրող գործակալությունը, սպառողի վարկային հաշվետու գործակալությանը բացասական տեղեկություն չի հաղորդում, կամ քաղաքացիաիրավական գործողություն չի սկսում հիվանդի կամ պատասխանատու կողմի դեմ չվճարման համար, նախքան երկարացված վճարման պլանի՝ այլևս ոչ օպերատիվ լինելու որոշման ընդունումը: Վերը նշված հիվանդին կարելի է ծանուցում ուղարկել և զանգել նրա վերջին հայտնի հեռախոսահամարով և հասցեով:

K. **Հաշիվների սնանկացում**

1. Սնանկության մասին ծանուցումը ստանալուց հետո, Dignity Health-ը պետք է դադարեցնի առգրավման բոլոր փորձերը, այդ թվում՝ հավաքագրման գործակալությանն ուղղված հանձնարարականը: Հիվանդի/պարտապանի հետ որևէ տեսակի կապ չի հաստատվելու, այդ թվում ' հեռախոսային զանգերի, նամակների, հայտարարությունների կամ ծանուցումների միջոցով: Ցանկացած հաղորդակցություն, անհրաժեշտության դեպքում, պետք է տեղի ունենա վստահորդի կամ տվյալ գործի քննության համար նշանակված հավատարմատար անձի հետ:

L. **Հավաքագրման գործակալության մեթոդների սահմանում**

1. <u>Ստանդարտները</u>՝ Dignity Health-ը պետք է սահմանի Dignity Health ընկերության արժեքների վրա հիմնված ստանդարտները և գործունեության ոլորտը


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.

և ստանա գրավոր համաձայնություն լիազորված ներկայացուցիչներից այդ ստանդարտների կիրառման վերաբերյալ: Այն պարտավորեցնում է լիազորված ներկայացուցիչներին հետևել Պարտքերի հավաքագրման բարեխիղճ մեթոդների մասին օրենքը (The Fair Debt Collection Practices Act, FDCPA) և բոլոր կիրառելի նահանգային և դաշնային օրենքները, այդ թվում՝ Առողջության և անվտանգության մասին օրենսգրքի §127400 դրույթի (Health & Safety Code §127400), և հաջորդող Հարկային օրենսգրքի (IRC) §501(r) դրույթի և դրանց հետ կապված դրույթները:

2. <u>Մոտեցումները</u>՝ Լիազորված վաճառողները պետք է ձեռնարկեն ողջամիտ քայլեր՝ չվճարված հաշիվներ ունեցող հիվանդի հետ աշխատելու և իր հաշիվը լուծելու համար: Dignity Health չի կարող հանդուրժել հավաքագրման ագրեսիվ և անպատեհ մեթոդները:

## VI. ՀՂՈՒՄՆԵՐ

A. Dignity Health Governance Policy #9.102, *Financial Assistance* Policy – *Arizona*

B. Dignity Health Governance Policy #9.103, *Financial Assistance Policy - California*

C. Dignity Health Governance Policy #9.104, *Financial Assistance Policy - Nevada*

D. Dignity Health Governance Policy #9.100, *Emergency Medical Care / Emergency Medical Treatment and Labor Act (EMTALA) Policy*

E. Dignity Health Administrative Policy #70.2.001, *Administrative Discounts Policy*


© Copyright 2007 - 2017 Dignity Health. For Internal Use Only.